ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/02

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Մասնակից՝ «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ի և ներկայացուցիչ՝ Հ. Խաչատրյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2021-ՃՈ-ԷԼ-ՍԱՐՔ» ծածկագրով բաց մրցույթ, էլեկտրական սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.01.2021թ.-ի թիվ 26/26-1/53-2021 գրությամբ «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 29.12.2020թ.-ի թիվ 3/27/58564-20 գրության հիման վրա, 11.01.2021թ.-ին «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 11.01.2021թ.-ին:

11.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/02 համարի ծածկագիրը:

15.01.2021թ.-ին և 05.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.02.2021թ.-ին:

2. <u>ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանությունը 29.12.2020թ.-ի թիվ 3/27/58564-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջների համաձայն ուղարկում է «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2021-ՃՈ-ԷԼ-ՍԱՐՔ» ծածկագրով գնման ընթացակարգիին հայտ ներկայացրած «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ի տվյալները՝ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

3. <u>«Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 12.01.2021թ.-ին գրությամբ դիմել է «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.01.2021թ.-ի թիվ 26/26-1/53-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 15.01.2021թ.-ին հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2021-ՃՈ-ԷԼ-ՍԱՐՔ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերին:

4. <u>ՍՑ-LO-2021/02 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից էլեկտրական սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 11.11.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2021-ՃՈ-ԷԼ-ՍԱՐՔ» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ն:

iii. «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթից գնմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2021-ՃՈ-ԷԼ-ՍԱՐՔ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 28.12.2020թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել

անհամապատասխանություններ, մասնավորապես՝ թիվ 1 հավելվածով՝ դիմում-հայտարարությամբ, Մասնակիցը հավաստել է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, սակայն թիվ 1 և թիվ 2 հավելվածներում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

v. Հանձնաժողովը որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 22.12.2020թ.-ին Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկման մասին ծանուցում:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները և Հանձնաժողովը որոշել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.01.2021թ.-ի թիվ 26/26-1/53-2021 գրությամբ «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ ոստիկանության կողմից էլեկտրական սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 11.11.2020թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2021-ՃՈ-ԷԼ-ՍԱՐՔ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով:

Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության կողմից էլեկտրական սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 11.11.2020թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2021-ՃՈ-ԷԼ-ՍԱՐՔ» ծածկագրով բաց մրցույթ գնահատող հանձնաժողովի 28.12.2020թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ թիվ 1 հավելվածով՝ դիմում-հայտարարությամբ, Մասնակիցը հավաստել է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, սակայն թիվ 1 և թիվ 2 հավելվածներում բացակայել է էլեկտրոնային ստորագրությունը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 22.12.2020թ.-ին Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկման մասին ծանուցում, սակայն

«Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները և Հանձնաժողովը որոշել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժել:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթից գնմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2021-ՃՈ-ԷԼ-ՍԱՐՔ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.01.2021թ.-ի թիվ 26/26-1/53-2021 գրությամբ «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/02 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ալեքսանդր Ումրիկյան Վյաչեսլավի» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**